ԲԱՂԴԱՏՄԱՆ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բ. Հ. ՎԵՐԴՅԱՆ

«Աշխարհաբարի շարահյուսություն» մեծարժեք աշխատության մեջ Մ. Աբեղյանը, քննելով երկրորդական նախադասությունների շարահյուսական բնույթի հարցերը, միաժամանակ ցույց տվեց բարդ նախադասության բաղադրիչների մի շարք հետաքրքրական հարաբերություններ։ Ձևի և չափ ու քանակի պարագա երկրորդական նախադասությունները նա տրոհեց երեք խմբի՝ բաղդատության, հետևանքի և բացաբարձության։ «Բաղդատական խոսքերը,— գրում է Մ. Աբեղյանը,—իրենց հերթին լինում են՝ նմանության, հավասարության և տարբերության»[1]։ Օրինակ, նմանության բաղդատական խոսքեր՝ Արա ինչպես կուզես։ Սիրե աղգդ ոչ լոկ խոսքով, սիրե ինչպես քու անձը։ Հավասարության խոսքեր՝ Նա նույնչափ հարուստ է, որչափ դու։ Որքան մարդ կար ընկած, այնքան էլ ձի դտանք։ Տարբերության խոսքեր՝ Պարապությունը ավելի է վնասում առողջությանը, քան չափաղանց զբաղմունքը։ Կգործենք ավելի հաջողությամբ, քան կարող ենք երևակայել։

Ձևի և չափ ու քանակի պարագա երկրորդական նախադասությունները գլխավորի հետ կապակցվում են նաև հետևանքի հարաբերությամբ, որոնք Մ. Աբեղյանը կոչում է «հետևանքի խոսքեր». օրինակ՝ Նա այնպես մութն է խոսում, որ ես բան չեմ հասկանում։ Նրա կոպիտ վարմունքն ինձ այնպես վիրավորեց, որ ես թողի, հեռացա նրանից։

Ձևի և չափ ու քանակի պարագա երկրորդական նախադասությունների արտահայտման երրորդ ձևը համարվում է բացաբարձությունը, որը, սակայն, շատ սակավ կիրառություն ուներ XIX դարի երկրորդ կեսի և XX դարի սկզբի դրական հայերենում, իսկ այժմ բոլորովին չի գործածվում։

«Բացաբարձության խոսքեր են կազմվում առանց որ շաղկապով, որ ցույց է տալիս մի հարակից հետևանքի կամ հանգամանքի շինելը,— գրում է Մ. Աբեղյանը։—Օրինակ[2]. Անհնարին է անպատիժ կերպով խախտել այդ ներդաշնակությունը, անհնարին է աղավաղել, խեղաթյուրել բնությունը, առանց որ այդ հանցավոր փորձի հակահարվածը նույն փորձի հեղինակի գլխին ընկներ»[3]։

Բաղդատության և հետևանքի հարաբերություններով նախադասությունները վերջին երկու տասնամյակում ավելի խոր ուսումնասիրության են ենթարկվել և, զատվելով ձևի, չափ ու քանակի պարագայից, դիտվել են իբրև առանձին բնույթի երկրորդական նախադասություններ՝ ա) համեմատության

---

1 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 639։

2 Բերված բոլոր օրինակները Մ. Աբեղյանինն են։

3 Մ. Աբեղյան, նույն տեղում, էջ 643։

իմաստային հարաբերություն ցույց տվող[4] կամ բաղդատական[5] և բ) հետևանքի երկրորդական նախադասություններ[6]։ Բաղդատական և հետևանքի կապակցություններին անդրադարձել է նաև Գ. Գարեգինյանը[7]։

Սակայն արդի հայերենի ստորադասական կապակցությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բաղդատությունը և հետևանքը մասնակի երևույթներ չեն ստորադասական նախադասության մեջ։ Նրանք իրենց արտահայտությունն են գտնում ոչ միայն բաղդատական և հետևանքի երկրորդական նախադասությունների (Ն. Պառնասյան, Վ. Առաքելյան) կամ ձևի և չափ ու քանակի պարագա երկրորդական նախադասությունների (Մ. Աբեղյան), այլ առհասարակ հայերենի բոլոր ստորադասական կապակցությունների մեջ։ Դրանք լեզվա-մտածողական այն կայուն միջոցներից են, որոնցով ձևավորվում են բարդ ստորադասական նախադասություններն ընդհանրապես։ Ընդ որում արդի հայերենի ստորադասական կապակցություններում դրսևորվում են բաղդատության բոլոր ձևերը (նմանություն, հավասարություն, տարբերություն)։ Այդ իրողությունն անմիջապես կնկատվի, եթե հայերենի ստորադասական կապակցությունները քննենք բաղդատման և հետևանքի նկատառումներով։

I ԲԱՂԴԱՏՈՒՄ

Շարահյուսական այս կարգի միջոցով կապակցվում են գրեթե բոլոր ստորադասական նախադասությունները, որոնց մեջ արտահայտվում է որևէ հատկանիշ՝ իբրև առարկայի որակ, կամ գործողության ձև, առարկայի, գործողության կամ դրանց հատկանիշի չափ ու քանակ, աստիճան։

Գլխավոր նախադասության որևէ հատկանիշ ցույց տալու համար բաղդատում, համեմատություն է կատարվում այս կամ այն ձևով մտային աղերսակցություն ունեցող մի այլ հատկանիշի հետ, որ արտահայտվում է երկրորդական նախադասությամբ։ Այդ բաղդատումը կարող է ցույց տալ համեմատվող հատկանիշների նմանությունը, հավասարությունը կամ տարբերությունը։ Ըստ այդմ բաղդատական կապակցությունները լինում են՝

1. Նմանության բաղդատական. Այս ձևի միջոցով գլխավոր նախադասության որևէ հատկանիշ արտահայտվում է բաղդատելով երկրորդական նախադասությամբ դրսևորվող մի այլ հատկանիշի հետ՝ ցույց տալով նրանց համանման լինելը։ Ստորադասական նախադասության կապակցման համար սովորաբար գործածվում են այնպիսի–ինչպիսի, այնպես–ինչպես, այնքան–որքան, ինչքան–այնքան, այնչափ–ինչչափ, նույնը–ինչ որ, նույնը–ինչպես և նման հարաբերական ու հարաբերյալ բառեր։ Հարաբերական բառերի հետ գլխավոր նախադասության մեջ կարող են հարաբերյալ բառեր չգործածվել։ Օրինակներ՝

ա) Ստորոգելիական վերադիր երկրորդական նախադասություններով՝ Դա նույնպիսինն էր, ինչպիսին այսօր էլ տեսավ գործարանում (ՎԽՄՄՀ, 9)։ Ասածս նույնն է, ինչպես մի հարյուր հիսուն տարի առաջ Նասիր-Ի-Խուսրաուի

---

4 Ն. Պառնասյան, Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում, 1961, էջ 141—143։

5 Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. Բ, 1964, էջ 262—268։

6 Ն. Պառնասյան, նշված աշխատությունը, էջ 182—187։ Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, էջ 249—259։

7 Գ. Գարեգինյան, Շաղկապները ժամանակակից հայերենում, 1963, էջ 239—350։

տեսածը, թող խաղաղությունն անբաժան լինի նրանից (ՎԽԳԼ, 1, 22)։ Ես կուզեի, որ Պոլիսը լիներ այնպես, ինչպես երազել եմ (ՎԹԿՀՃ, 211)։

ր) Որոշիչ երկրորդական նախադասություններով՝ Պրոլետարիատը նույնպիսի վճռականությամբ կմերժի այդ խորհուրդը, որպիսի վճռականությամբ Պլեխանովը առաջարկում է այդ նրան (ՍՇԵ, 1, 152)։ Ես քեզ էն լավությունը կանեմ, ինչ որ միայն արծիվը կարող է անել (ՀԹԵ, 2, 342)։ Բացանոդի ճիշտ դուշակությունն արդյոք նրա՞ն ևս նույն զարմանքն ու հիացմունքն է պատճառում, ինչ որ իրեն (ՆԴԵԺ, 1, 34)։ Նորից ոլորվեց փողոցից փողոց հալածական արդիշը և տեսավ դարձյալ մարդկային այն բոլոր արարքները, ինչ որ տեսել էր Շիրազում (ԱԻԱէ, 149)։

դ) Հատկանիշի աստիճան ցույց տվող երկրորդական նախադասություններով՝ Բայց մահը կարող էր լինել այնքան գունաթափ, այնքան զայրացած. որպես այդ նազելի կինն էր այդ բոպեին (ՐԵԺ, 3, 125)։ Աչքերը կապույտ էին, ինչպես Իտալիայի ջինջ երկինքը, հայացքը՝ գվարթ ու անհուն, ինչպես Ադրիատիկի հորիզոնները (ՆԴԵԺ, 1, 120)։ Ինչ հրաշալի աչքեր, բայց լուրջ ու խոհուն, ինչպես այն եղանակը, որ մի քիչ առաջ նվագում էր նա (ՆԴԵԺ, 1, 121)։

դ) Ուղիղ խնդիր երկրորդական նախադասություններով՝ Ինչ որ մեր ամբաստանված նամակի մեջ ասել ենք, նույնը կրկնում ենք այսօր (ՄՆԸԵ, 369)։ Հողատերերը, ազնվականները փորձեցին գյուղերում անել նույնը, ինչ որ վաճառականներն անում էին քաղաքներում (ՍՇԵ, 1, 62)։ Լոկ այն էր անում, ինչ որ անում էր ավազն ամանին՝ մաքրում էր ժանդից (ՊՍՍԶ, 151)։

ե) Զևի պարագա երկրորդական նախադասություններով՝ Նրանք անխելք չեն, զավակս... միայն կրթվում են ու մեծանում են այնպես, ինչպես սարերում աճում են վայրի անասունները (ՐԵԺ, 3, 133)։ Ինչպես մատաղ աղջիկը ժրպտում է դդվող սիրեկանին, այնպես էլ վարդն իր շրթերն է բանում առավոտյան հովիկին (ԱԻԱէ, 77)։ Սաղավարտը քաշեց մինչև ականջները, վահանը կախեց մեջքից, ինչպես անում են նահանջի մեջ փախչող ասպետները՝ մեջքից հարված չընդունելու համար... (ԱԻԱէ, 171)։

զ) Նմանության բաղդատական երանգ է նկատվում նաև այլ բնույթի երկրորդական նախադասությունների, օրինակ, պայմանի պարագայի դեպքում. Բարակ մեջքը Վանա ծովի կարապի վիզն է կարծես, Ու թե գրկես դալար մեջքը՝ անմահության կգրես (ՀՇՍԽ)։ Հարաբերակցություն արտահայտող նախադասության մեջ՝ Ու որքան այդ հնչյունները դյութիչ էին, այնքան դեղեցիկ ու հմայիչ էր ինքը՝ Անտոնիո Բոնվինին... (ՆԴԵԺ, 1, 126)։ Այս վերջին օրինակի մեջ կա նաև չափի հավասարության գաղափար։

Նմանության բաղդատական կապակցություններր, ինչպես նկատվում է, իրենց բաղադրիչների մտային հարաբերակցությամբ կատարելապես նույնը չեն։ Երբեմն ընդգծվում է ոչ թե բաղդատվող հատկանիշների նմանությունը, այլ պարզապես նույնությունը։ Այսպիսի դեպքերում գլխավոր նախադասության մեջ սովորաբար գործածվում է նույն-ը հարաբերյալը, օրինակ՝ Հորս դրությունը նույնն է, ինչպես տեսնում եք նրան ամեն օր (ՆԴԵԺ, 2, 191)։

Նմանության բաղդատական կապակցությունների մեջ երբեմն ընդգծվում է համեմատվող հատկանիշների համապատասխանությունը. օրինակ՝ Բայց թող էդպես լինի, ինչպես ուզում ես (ՀԹԵ, 1, 378)։ Նա գործում էր այնպես, ինչպես թելադրում են նրան բնության անկախ օրենքները (ՆԴԵԺ, 2, 189)։

Միայն թե տես, ամեն բան արած լինես էնպես, ինչպես ասում եմ (ՀԹԵ, 386)։ Թող ապրի ամեն մարդ ինչպես ուզում է (ԱԻԱէ, 152)։

Այս օրինակների մեջ երկրորդական նախադասությունները կրճատելով կստացվեն դերբայական դարձվածքներ, որոնց հետ կգործածվեն և՛ պես, նման, և՛ ըստ համապատասխան կապերը.—... քո ուզածի պես, նման (-ըստ քո ուզածի), բնության անկախ օրենքների կողմից նրան թելադրելու պես, նման (-ըստ թելադրածի, թելադրածի համապատասխան ձևով), իր ուզածի պես, նման (-ըստ իր ուզածի), իմ ասածի պես, նման (-ըստ իմ ասածի)։

Երբեմն էլ գլխավոր նախադասության որևէ հատկանիշ բաղդատվում է երկրորդական նախադասությամբ արտահայտված մի այնպիսի հատկանիշի հետ, որը իրական չէ, այլ երևութական, կարծեցյալ։ Այդպիսի դեպքերում երկրորդական նախադասության մեջ գործածվում են կարծես, ասես, որպես թե *և նման երկբայական եղանակավորող բառեր. օրինակ՝ Այդ միջոցին նրա դեմքը գարշանքի այնպիսի արտահայտություն էր ստացել, որ կարծես լուծողական էր ընդունում (ՆԴԵԺ, 2, 52)։ Մայրս և բոլորն էլ հագնում էին այնպես, որ կարծես պետք է հարսանիք գնան (ՎԹԿՀՃ, 16)։*

Այսպիսի նախադասություններն ընդունված է կոչել կարծեցյալ նմանության բաղդատական։

2. Հավասարության բաղդատական. *Այս ձևի միջոցով գլխավոր նախադասության որևէ հատկանիշ արտահայտվում է բաղդատելով երկրորդական նախադասությամբ դրսևորվող մի հատկանիշի հետ՝ ցույց տրվելով այդ հատկանիշների հավասար լինելը՝ ըստ չափի, աստիճանի։ Կապակցությունն ստեղծվում է* այնքան–որքան, նույնքան–որքան, նույն չափ–ինչչափ, այնչափ–որչափ *և նման հարաբերյալ ու հարաբերական բառերի միջոցով։*

Հավասարության բաղդատական կապակցություններն արտահայտվում են հատկապես չափ ու քանակի պարագա երկրորդական նախադասությունների միջոցով։ Օրինակ՝ Հայոց հասարակ ժողովուրդը աղքատ է և, չունենալով ոչինչ կարողություն, հազիվհազ սերմանում է և հնձում է այնքան, որքան նորա տարեկան ապրուստը զիարդ և իցե, պիտի կարողանար ապահովել (ՄՆԸԵ, 435)։ Փոխարենը խոստանում է ոսկի տա՝ որքան կուզի (ՀԹԵ, 2. 482)։ Եվ ինչքան մոտեցել էր, այնքան հեռացավ, նորից ոտք դրեց իր ճամփին (ՎԽԳԼ, 1, 27)։

Սակայն հավասարության բաղդատական կապակցություններ են ձևավորվում նաև այլ բնույթի երկրորդական նախադասությունների դեպքում, երբ բաղդատվող հատկանիշները կրում են չափ ու քանակի բնույթ։ Օրինակ՝

Ստորոգելիական վերադիր երկրորդական նախադասությամբ՝ *Եկեղեցու ներքին զարդարանքն այնքան էր, որքան մի գյուղական եկեղեցի կարող էր ունենալ՝ առանց ժողովրդին ավելորդ ծախքի ենթարկելու (ՄԵԺ, 2, 343)։* Որոշիչ երկրորդական նախադասությամբ՝ *Իսկ սորա փոխանակ, ես իմ ազգի անունով խոստանում եմ ձեզանից յուրաքանչյուր զենքով գնացող անհատին այնչափ հող, որչափ ինձ կամ իմ ազգի յուրաքանչյուր անհատին պիտի բաժին ընկնի (ՄՆԸԵ, 409—410)։*

Հատկանիշի աստիճան արտահայտող երկրորդական նախադասությամբ՝ *Բայց էֆենդին որքան պոռոտախոս էր, որքան պարծենկոտ էր և որքան փքված սպառնալիքներ կարդալ գիտեր, այնքան էլ աղվեսի նման երկչոտ էր (ՐԵԺ,*

3, 159)։ Հուսալքումը նորից եկավ տիրեց ինձ նոր թափով և այնքան ուժեղ, որքան վրեժի դգացումս մնացել էր անհագուրդ (ՆԴԵԺ, 1, 117)։

Չևի պարագա (չափի պարագայի որոշակի արժեքով) երկրորդական նախադասությամբ՝ Ես ճանաչում եմ հորս, ինչպես ինքս ինձ (ՆԴԵԺ, 2, 176)։

3. Տարբերության բաղդատական. Բաղդատման այս ձևի միջոցով ցույց է տրվում գլխավոր նախադասության մեջ արտահայտված որևէ հատկանիշի տարբերությունը երկրորդական նախադասության մեջ արտահայտված հատկանիշից։ Եվ որովհետև հատկանիշ են արտահայտում ոչ միայն ձևի և չափ ու քանակի պարագաները, ուստի տարբերության բաղդատականը դրսևորվում է նաև այլ բնույթի երկրորդական նախադասությունների դեպքում։

Տարբերության բաղդատական կապակցության մեջ գլխավոր կամ երկրորդական նախադասություններից մեկի ստորոգյալը (պարզ և բաղադրյալ) անպայման պետք է արտահայտված լինի ժխտական ձևով։ Եթե ժխտական է գլխավոր նախադասության ստորոգյալը, ապա դրական ձևով պետք է արտահայտվի երկրորդական նախադասության ստորոգյալը, և ընդհակառակն։ Հատկանիշների տարբերությունը, ուրեմն, արտահայտվում է ստորոգյալների դրական և ժխտական ձևերի բաղդատման ու հակադրման ճանապարհով։ Օրինակ՝

ա) Ստորոգելիական վերադիր երկրորդական նախադասությամբ՝ Գուցե հարցնես դու. եթե միայն այլևս նույնը չես, ինչպես ես քեզ ճանաչում էի այն ժամանակ (ՆԴԵԺ, 2, 166)։ Իր շուրջն էլ փոխվում է, ինքն էլ այն չի, ինչ որ առավոտյան էր (ՀԹԵ, 1, 330)։ Այսպիսի հոբելյանների նպատակը այն չէ, որ մարդիկ հավաքվեն և աշխատեն ուրախ ժամանակ անցկացնել հոբելյարի հետ. ոչ էլ միայն այն, որ հասարակությունն առիթ ունենա շնորհակալություն հայտնելու և վարձատրելու իր մշակին (ՍՇԵ, 1, 27)։

բ) Որոշիչ երկրորդական նախադասությամբ՝ Բոլորովին նոր, բոլորովին աննման բարեկամության մի զգացմունք էր այս, որպիսին ես, արդարև, չէի տածել դեպի ոչ մի ծանոթն ու ընկերուհին (ՄԵԺ, 2, 374)։ Ես և մեր բոլոր ընտանիքը կորցրինք մի այնպիսի հայր, որպիսին չէր տալ աշխարհն իր բոլոր պանձերով (ՆԴԵԺ, 2, 176)։ Այնպիսի անգերազանցելի ճաշակ ունեցա, որի նմանը չունեցա իմ գարավոր վերապրումների ընթացքին այլևս (ԱԻԱԷ, 64)։

գ) Հատկանիշի աստիճան արտահայտող երկրորդական նախադասությամբ՝ Արևի վերջալույսը ոչ մի ժամանակ այնպես գեղեցիկ չէր զարդարել ամպերը, որպես այն երեկո. և լեռնային օդը իր փափուկ թարմությամբ ոչ մի ժամանակ այնքան կազդուրիչ չէր եղել, որպես այն գիշեր (ՐԵԺ, 3, 17)։ Հայրս աշխատում էր ինձ հասկացնել, թե մեր գրությունն այնքան աննախանձելի չէ, որքան մենք կարծում ենք (ՐԵԺ, 3, 137)։ Եվ երգեցին նրանք վերջին անգամ այնպես գեղեցիկ և չնաշխարհիկ և վսեմագին, որպես նրանք չէին երգել երբեք (ԱԻԱԷ, 43)։

դ) Ուղիղ խնդիր երկրորդական նախադասությամբ՝ Էն, ինչ ձին է անում գիլի հետ, ոչ մի անասուն չի անիլ (ՀԹԵ, 1, 389)։ Այդ նշանակում է անել այն, ինչ որ շուրջդ ոչ ոք չի անում, և չի անի այն, ինչ որ շուրջդ ամենքն են անում (ՆԴԵԺ, 2, 177)։ Նրանք չեն գրել այն, ինչ որ թույլ կտան տպագրելու, այլ գրել են այն, ինչ որ չէին կարող չգրել (ՍՇԵ, 1, 31)։

Ինչպես նկատվում է, ուղիղ խնդիր երկրորդական նախադասություններն այսպիսի կապակցության մեջ իրենց արտահայտած օբյեկտի հետ միաժամանակ ենթադրում են և այդ օբյեկտի հատկանիշը՝ ինչ-որ չափով։ Այսպես, վերը

բերված օրինակների դեպքում կարելի է մտածել, որ Այդ նշանակում է անել այն գործածվել իբրև... անել այնպիսի բան. նրանք չեն գրել այն գործածվել է չեն գրել այնպիսի բան նշանակությամբ և այլն։ Իհարկե, բաղդատման հանգամանքը այսպիսի կապակցությունների մեջ համեմատաբար թույլ է։

ե) Ձևի պարագա երկրորդական նախադասությամբ՝ Օձը իր բոլոր առաձգական դյուրաբեկությամբ չէր կարող այնպես ծողալ, որպես այդ համարձակ և ճապուկ մարմինը դալարում էր խիտ եղեգնաբույսերի մեջ (Ռեժ, 3, 85)։

զ) Չափի պարագա երկրորդական նախադասությամբ՝ Մեղանից ոչ ոք այնքան չէր սիրում ու գուրգուրում մեր տունը, որքան Գոգոն (ՎԹԿՀՃ, 41)։ Ոչ ոք այնքան չէր կարդացել, որքան այդ փոքրիկ դալուկ տղան։

Բերված օրինակները ցույց են տալիս, որ բաղդատումը իբրև լեզվամրտածողական հանգամանք կարող է արտահայտվել ոչ միայն ձևի և չափ ու քանակի պարագա, այլև ուրիշ բնույթի երկրորդական նախադասություն ունեցող բոլոր կապակցություններում, որոնց մեջ կա առարկայի կամ գործողության որևէ հատկանիշ։ Այդպես կարող է լինել ստորոգելիական վերագիր, որոշիչ, հատկանիշի աստիճան արտահայտող, խնդիր և պարագա երկրորդական նախադասությունների դեպքում։

II ՀԵՏԵՎԱՆՔ

Հետևանքի շարահյուսական կարգը կապվել է լոկ ձևի և չափ ու քանակի պարագա երկրորդական նախադասությունների հետ։ Մ. Աբեղյանը հետևանքի մասին ակնարկում է նաև «հիմունքի խոսքերի» քննության մեջ։ Վերջերս հայ քերականագետներն ընդունում են հետևանքի պարագան իբրև ինքնուրույն երկրորդական նախադասություն։ Այնուամենայնիվ, պետք է ասել, որ չի բացահայտվել հետևանքի, որպես խիստ ինքնատիպ շարահյուսական կարգի դերը ստորադասական կապակցությունների մեջ։

Հետևանքի հանգամանքն իր արտահայտությունն է գտնում գրեթե բոլոր ստորադասական կապակցություններում, եթե նրանց մեջ հատկապես ընդգծված չէ սուբյեկտի կամ օբյեկտի առարկայական հարաբերությունը (ենթակա և խնդիր երկրորդական նախադասություններով ստորադասություն)։ Կան երկրորդական նախադասություններ, օրինակ՝ պատճառի և պայմանի, որոնք գլխավորի հետ կապակցվում են հատկապես հետևանքի հարաբերությամբ։ Այսպես են ստեղծվում պատճառա-հետևանքային և պայմանա-հետևանքային ստորադասական կապակցությունները։

Հետևանքի ստորադասական կապակցության դեպքում պարզ նախադասություններից մեկի մեջ ցույց է տրվում որևէ վիճակ, հատկանիշ, նյութական կամ բարոյական որևէ հիմունք, որի հետևանքն է լինում երկրորդ նախադասությամբ արտահայտված բովանդակությունը։ Ստորադասական կապակցությունների մեծ մասի մեջ հիմունքն արտահայտվում է գլխավոր նախադասությամբ, որի հետևանքը դրսևորվում է ստորոգելիական վերադիր, որոշիչ, հատկանիշի աստիճանի, ձևի, չափ ու քանակի պարագա և հարաբերակցվող երկրորդական նախադասությունների մեջ։ Գլխավոր նախադասության մեջ սովորաբար գործածվում է ցուցական դերանվամբ արտահայտված որևէ հարա-

բերյալ բառ (այն. այնպիսի, այնպես, այնքան, այնչափ և այլն), որով մատնացույց է արվում նրան հետևող երկրորդական նախադասության գոյությունը. որպես հետևանքի ցուցիչ՝ Առանձին դեպքերում գլխավոր նախադասության մեջ հարաբերյալ բառ չի գործածվում, նրա դերը կատարում է գլխավոր նախադասության հատուկ հնչերանգը։

Ստորադասական որոշ կապակցություններում, ընդհակառակը, երկրորդական նախադասությունն արտահայտում է որևէ հիմունք (ժամանակ, պատճառ, պայման և այլն), որի հետևանքն է դառնում գլխավոր նախադասությունը։ Այստեղ արդեն կատարելապես շրջվում են գլխավոր և երկրորդական նախադասությունների համար ավանդական քերականության կողմից սահմանված դիրքերը։

Նախ քննենք այն ստորադասական կապակցությունները, որոնց մեջ հետևանքն արտահայտվում է երկրորդական նախադասությամբ։

ա) Ստորոգելիական վերադիր երկրորդական նախադասությամբ՝ Արդյունքն այն է լինում, որ օդի հոսանքի ուժգին թափից ձայնալարերն ավելի ուժգին են թրթռում (Էդ. Աղայան, Լեզվ. ներած., էջ 118—119), Զարմանալի բան է, ընկեր ավագ լեյտենանտ, ասես իմ ճակատագիրն էնպես է, որ առաջին օրն անհաջողությամբ պիտի սկսվի ինձ համար (ՀՄՆԱ, 109)։

բ) Որոշիչ երկրորդական նախադասությամբ՝ Նա հայտնեց մի լուր, որ Ամալյային անհանգիստ դրության մեջ գրավ (ՄԵԺ, 2, 71)։ Նա է տվել թագավորի աղջկան էն շնորհքը, որ արտասուքները մարգարիտ դառնան (ՀԹԵ, 2, 434)։ Իրական կերպով այս վայրկյանիս, իմ հավերժ սիրելիս, վերհիշում եմ ահավոր կարոտիդ սոսկալի մռնչյունը, որ դող ձգեց հոգուս մեջ (ԱԻԱէ, 44)։

գ) Հատկանիշի աստիճանի երկրորդական նախադասությամբ՝ Եվ դուք այնքան անգութ եղաք, որ Բարդուղիմեոս առաքյալի սուրբ գերեզմանը քանդեցիք, կարծելով թե այստեղ գանձ կա թաքցրած (ՐԵԺ, 3, 53)։ Մորս այս հայտարարությունն այնքան վճռական էր, որ բոլորս էլ դողացինք (ՎԹԿՀՃ, 58)։ Մութ էր այնքան, որ ոչինչ չէր երևում, ոչ պատ, ոչ դուռ (ՎԽԳԼ, 1, 115)։ Սարերից իջնող ջրերն այնքան էին առատ, որ գրեթէ ամեն տուն առու ուներ յուր բակում (ՄԵԺ, 2, 339—340)։ Ասել էինք նաև, որ նրանց գյուղի եկեղեցու տակից ջուր է դալիս այնքան առատ, որ կարող էր երկու սայլ, իր եզներով, քաշել, տանել (ՎԹԿՀՃ, 100)։ Գելն այնքան արագավազ է, որ մի գիշերվա մեջ երեքչորս օրվա ձիու ճամփա կկտրի (ՀԹԵ, 1, 395)։

Վերջին երեք նախադասությունները հետևանքի հետ գուցե ավելի շատ հնարավորության հանգամանք են արտահայտում։ Հետևանքի հետ հնարավորության հանգամանք է դրսևորվում և այս կարգի որոշիչ երկրորդական նախադասություններով՝ Այդպես չէ. ոչ ամենայն ընթերցող մարդ ազգի մեջ ունի այնքան դիտություն, որ կարողանա դատավոր լինել ... (ՄՆԸԵ, 337)։ Ինձ այնպիսի մի հնար տուր, որ մարդու կրծքի տակի քարը իսկական սիրտ դարձնեմ (ԱԻԱէ, 31)։ Ես կանգնած էի մի այնպիսի տեղում, ուստի երևում էին գլխավոր պալատը և մեծ ու փոքր Տրիանոնքը (ՄՆԸԵ, 258)։

դ) Ձևի պարագա երկրորդական նախադասությամբ՝ Էնպես դրան ես քնացնեմ, որ չղարթնի էլ հալիտյան (ՀԹԵ, 2, 121)։ Էնպես զարկեց ջրաղացաքարին, Քարը եղավ հազար կտոր, Կտորները երկինք թռան Ու գնում են մինչև էսօր (Նույնը, 125)։ Այնպես լիքն էր նրա հոգին սիրով և կարոտով, որ նա և՛ արտասվել էր ուզում, և՛ ժպտալ (ԱԻԱէ, 27)։ Գիշերն իջել Ծովասարին ու հովն

այնպես էր հեվում, Որ լուսնակի մայր ձեռի տակ գիշերն օրոցք էր թվում (ՀՇՍԽ)։

ե) Զափ ու քանակի պարագա երկրորդական նախադասությամբ՝ Եվ այժմ լուսավորյալ ազգերի մեջ այնքան ծաղկած է կրիտիկան, որ համարձակ կարելի է ասել, թե այդ բանը դարձած է մի ճյուղ մատենագրության և այն, շատ օգտակար ճյուղ (ՄՆԸԵ, 338)։ Նրա աչքերը այնքան սովորած էին այս բարբարոս ժողովրդի ցույցերին, որ ամենաչնչին երևույթից կարող էր շատ բան դուշակել (ՐԵԺ, 3, 14)։ Էնքան պստիկացավ, որ դառավ բղեզ (ՀԹԵ, 1, 482)։ Մահակն էլ մաշվել էր, մինչև բուռն էր հասել, Մի օրվա միջում էնքան էր վաղել (ՀԹԵ, 2, 102)։

ղ) Հարաբերակցության նախադասությամբ ընդհանրապես արտահայտվում է ելակետային-հետևանքային փոխակցությունը։ Երկրորդական նախադասությունը ցույց է տալիս մի հետևանք, որ ուղիղ համեմատական է գլխավոր նախադասության մեջ արտահայտված հատկանիշին. եթե վերջինս նվազում է, նրան համապատասխան նվազում է և երկրորդական նախադասությամբ արտահայտված հետևանք-հատկանիշը, և ընդհակառակն, եթե գլխավոր նախադասության մեջ արտահայտված հատկանիշը աճում է, նրան համապատասխան աճում է և երկրորդական նախադասության մեջ դրսևորվող հետևանք-հատկանիշը։ Օրինակ՝

Տարիներն անցնում էին իրար հետևից, թագավորը ծերանում էր, և քանի ծերանում էր, այնքան ավելի էր հուսահատվում... (ԱԻԱէ, 159)։ Լուրն ինչքան տարածվում էր, ատելությունն այնքան խորանում էր և փրվրում՝ (ՎԹԿՀՃ, 163)։

է) Հետևանքի պարագա երկրորդական նախադասության դեպքում հետևանքը բխում է գլխավոր նախադասության արտահայտած ամբողջ բովանդակությունից։ Երկրորդական նախադասությունը լրացնում է ոչ թե գլխավոր նախադասության որևէ անդամի, այլ նախադասությանն ամբողջովին։ Օրինակ՝ Տների ներսը չէր գրավում մարդկանց, ուստի ժողովուրդը լցված էր դուրսը և ղբոսնում էր սառած մայթերի վրա, կամ նոր կանաչող ծառուղիներում (ՄԵԺ, 5, 7)։ Փոքրիկ պատուհանը ծեփվել էր դրսից նայող հետաքրքիր դեմքերով ու պսպղուն աչքերով, այնպես որ առանց այն էլ կիսախավար խրճիթը համարյա թե մթնել էր (ՆԴԵԺ, 1, 14)։ Գյուտը գիտեր փորձված ծերուկի թափանցությունը նման նյութերի մեջ, ուստի և մտածեց այդ դատողության մասին (ԴԴՎ, 167)։ Գիշերները ցուրտ էր լինում, ուստի ամեն մի այգում խարույկ էր վառվում (ՎԹԿՀՃ, 122)։

Այժմ քննենք այն ստորադասական կապակցությունները, որոնց մեջ հետևանքն արտահայտվում է, ընդհակառակն, գլխավոր նախադասությամբ, իսկ ելակետը երկրորդական նախադասությունն է. նրանով է պայմանավորված գլխավոր կոչված նախադասության բովանդակությունը։

Այսպիսի կապակցություններ ստեղծվում են՝

ա) Ժամանակի պարագա երկրորդական նախադասությամբ՝ Երիտասարդը ամբողջ մարմնով դողաց, երբ նկատեց, որ կորցրել է գիշերի մեծ մասը... (ՐԵԺ, 3, 21)։ Ահմաղը հիվանդանում էր թե չէ, մեր ուրախությունն էլ հետը կտրում էր (ՀԹԵ, 1, 348)։ Հրացանն արձակես թե չէ, իսկույն կհարձակվեն (նույն տեղում, 396)։ Երբ ժպտում էր (բայց ե՞րբ չէր ժպտում), նրա չքնաղ այտերի վրա մատնահարներ էին գոյանում և փոքրիկ բերանի մեջ, վարդագույն

շուրթերի տակ, շողշողում էին փղոսկրի պես սպիտակ ու մանրիկ ատամները (ՆԴԵԺ, 1, 120)։

Բայց մանկանում է սերս միշտ, դառնում անցավ,
Երբ ես լսում եմ վճիտ ձայնը աղջկա (ԵՁԵԺ, 1, 309)։

բ) Պայմանի պարագա երկրորդական նախադասությամբ՝ Որ տեղում չքանում է աղդությունը, այնտեղ չքանում է նյութապես կամ բարոյապես և ինքը ազգը (ՄՆՐԵ, 349)։ Քանի որ մենք այսպես կլինենք, մեր վիճակը միշտ այսպես կմնա (ՐԵԺ, 3, 139)։ Դու եթե ամեն խոսողի լսես, երկու օր կմնաս ըստեղ... (ՄԵԺ, 4, 37)։ Աչքդ թեքեցիր, բանիդ տերը չես (ՀԹԵ, 2, 37)։

Թե դաշտ դուրս դաս, ծաղիկների
Գորդ կդառնա քո ճամփան,
Եթե տխրես, յա՜ր, անտառի
Եղնիկները կողբան (ԳԱՀ, 187)։

գ) Պատճառի պարագա երկրորդական նախադասությամբ՝ Եվ որովհետև այսօր ժամանակից ուշ էինք ճաշում, այդ պատճառով էլ ավելի քաղցած էինք (ՄԵԺ, 2, 324), Եվ որովհետև տաղանդի հետ միասին նա ուներ և գրավիչ արտաքին, ուստի բոլոր կանայք սիրում էին նրան, օրիորդները գրեթե պաշտում (ՄԵԺ, 5, 306)։ Քեզ չեն սիրի, քանի որ քո սրտի դաղը չկա (ԵՁԵԺ, 1, 239)։

Ինչպես նկատվում է, պատճառի և պայմանի պարագա երկրորդական նախադասությունները գլխավորի հետ կապվում են հիմնականում հետևանքի շարահյուսական կարգի միջոցով։—Պատճառի և պայմանի պարագա երկրորդական նախադասությունները հանդես են գալիս իբրև մի հիմունք, որի հետևանքն արտահայտվում է գլխավոր նախադասությամբ։ Այսպես, վերջին նախադասության մեջ.

«Քանի որ սրտի դաղը չկա»— ուստի դրա բնական հետևանքն է՝ «քեզ չեն սիրի»։

դ) Նպատակի պարագա երկրորդական նախադասությունը ևս մի նյութական կամ բարոյական հիմունք է, դրդապատճառ, որից բխում է գլխավոր նախադասության բովանդակությունը իբրև հետևանք։ Ճիշտ է, նպատակի պարագա երկրորդական նախադասության գործողությունն ավելի ուշ է ենթադրվում, քան գլխավոր նախադասության մեջ արտահայտված գործողությունը, բայց այն ելակետ է, դրդապատճառ և իբրև այդպիսին տրամաբանորեն նախորդում է գլխավոր նախադասության գործողությանը, որը միայն հետևանքն է այդ դրդապատճառի։ Օրինակ՝

Աքլորը մի օր կտուր բարձրացավ, որ աշխարհ տեսնի (ՀԹԵ, 1, 435)։ Սպասավորներն ու թիկնապահները մի կերպ զսպեցին նրանց, որ նախարարները նստեն (ԴԴՎ, 51)։ Վռամը ձեռքը գցեց հեռացող տղաների մեջքերին, որ առաջ մղի նրանց (նույնը, 270)։ Ո՞ւմ աչքն է յարիս տեսել, էն աչքին մեռնեմ, էն աչքը թող ինձ նայի, կարոտս առնեմ (Հ. Շիրազ, «Սիամանթո և Խջեդարե»)։

ե) Հիմունքի պարագա երկրորդական նախադասությամբ։ Այս դեպքում ևս երկրորդական նախադասությունն է ելակետը. այն արտահայտում է նյու-

թական կամ մտավոր, բարոյական որևէ հիմունք, որից բխեցվում է գլխավոր նախադասության բովանդակությունը, իբրև հետևանք, հաճախ նաև մտավոր հետևություն, եզրահանդում։ Օրինակ՝

Որպես երևում է, դուք ձեր առաջին քաջությունը փորձել եք այդ ողորմելի շորի կտորների վրա... (ՐԵԺ, 3, 15)։ Դավաճան, ուխտադրուժ, թող պապանձվի քո լեզուն այսուհետև, ինչպես որ դու երդվեցիր (ԱԻԱէ, 166)։ Չէ, ոնց որ տեսնում եմ, սրանից հետո չիբուխս էլ էլեկտրականով եմ վառելու (ԲՍԱ, 47)։

զ) Հակառակ հիմունքի պարագա երկրորդական նախադասությամբ արտահայտվում է մի որևէ հանգամանք, որին, սակայն, չի հաջորդել բնական հետևանքը։ Այնուամենայնիվ, գլխավոր նախադասությունը կապվում է երկրորդական նախադասության հետ հետևանքային երանգով։ Օրինակ՝

Հայրս այդպիսի թեթևությամբ չէր կարող վերաբերվել դեպի իր և իր ընտանիքի երջանկությունն ու պատիվը, որքան էլ նրա մեջ բուռն ցանկությամբ գործեր խաղալու սերը, մոլությունը (ՆԴԵԺ, 2, 176)։ Եվ չնայած որ անթիվ դարեր են անցել, Նույնն է երազը նրա, լոկ մարմինն է ծեր (ԵՉԵԺ, 1, 278)։ Որքան որ մայրս սարսափում էր աղավնուց, բայց էլի լավ բաները նմանեցնում էր աղավնու (ՎԹԿՀՃ, 190)։ Այդ օրվանից Վռամը թեև շատ էր ման եկել այգիներում և խիստ հոգնած, ջարդված էր, բայց, այնուամենայնիվ, չէր ցանկանում գրասենյակից դուրս գալ (ՔԹՈՀ, 223)։

է) Հարաբերակցության նախադասությամբ՝ Որքան մոտենում էր երիտասարդը, այնքան հիշյալ առարկան աճում և ավելի մեծ ծավալ էր ստանում (ՐԵԺ, 3, 24)։ Քանի գեղին մոտենում ենք, գելերը ետ են ընկնում (ՀԹԵ, 1, 40)։ Ոնց որ դու ինձ համար կարմիր ծաղիկ բերել ես ու ընկել փորձանքի մեջ, էնպես էլ ես պետք է աղատեմ քեզ այդ փորձանքից (ՀԹԵ, 2, 484)։

Ինչպես նկատում ենք, հետևանքը, իբրև շարահյուսական կարգ, հատուկ է ոչ միայն ձևի, չափ ու քանակի և հետևանքի, այլև ուրիշ բնույթի երկրորդական նախադասություններ ունեցող ստորադասական կապակցություններին։ Ավելին, հետևանքը հաճախ արտահայտվում է և գլխավոր նախադասության միջոցով, որի համար երկրորդական նախադասությունը հանդես է գալիս իբրև ելակետ, նյութական կամ բարոյական հիմունք, դրդապատճառ։ Այսպիսով՝ հետևանքը ոչ թե մասնակի, այլ ընդհանրական կարգ է, հատուկ ստորադասական գրեթե բոլոր կապակցություններին, այն չի կարելի կապել որևէ առանձին բնույթի երկրորդական նախադասության հետ։

Հայոց լեզուն անսահման նյութ է տալիս պնդելու, որ ստորադասական կապակցությունների ուսումնասիրության դեպքում պետք է հաշվի առնել ոչ միայն երկրորդական նախադասությունների բնույթը և կապակցող բառերը (շաղկապներ, հարաբերական ու հարաբերյալ բառեր), այլև բարդ նախադասության կազմի մեջ մտնող պարզ նախադասությունների մտային փոխհարաբերությունը բաղդատման, հետևանքի և այլ միջոցներով։ Բաղդատումն ու հետևանքը այնքան օրինաչափ են և ընդհանուր ստորադասական բոլոր կապակցությունների համար, որ դրանք կարելի է կոչել շարահյուսական կարգեր։

Կարելի է մտածել, որ դրանք տրամաբանական կարգեր են։ Իրոք, մտածողությանը խիստ հատուկ են և՛ բաղդատումը, և՛ հետևանքը, որպես բարդ դատողությունների ստեղծման միջոցներ։ Բայց, այսուհանդերձ, դրանք նաև քերականական կարգեր են, որովհետև դատողական այդ միջոցները ստանում են իրենց լեզվական ձևավորումը։ Դա մասնավորապես վերաբերում է հատ-

կանիշների բաղդատմանը, երբ գլխավոր և երկրորդական նախադասությունները կապակցվում են համապատասխան հարաբերյալ ու հարաբերական բառերի միջոցով, Այսպես, նմանության բաղդատական կապակցությունների դեպքում՝ նույնը-ինչ որ, նույնը-ինչպես, նույնպիսին-ինչպիսին, նույնպիսի-որպիսի, այնպես-ինչպես, այնպես-որպես և այլն։ Հավասարության բաղդատական կապակցությունների դեպքում՝ այնչափ-որչափ, այնքան-որքան, այնքան-ինչքան։ Տարբերության բաղդատական կապակցություններին բնորոշ է այն, որ եթե գլխավոր նախադասության ստորոգյալը արտահայտված է ժխտական ձևով, ապա երկրորդական նախադասության ստորոգյալն անպայման պետք է լինի դրական, հաստատական ձևով, և ընդհակառակն։

Երբ երկրորդական նախադասությունները ցույց են տալիս գլխավոր նախադասության բովանդակությունից բխող մի հետևանք, կապակցությունն ստեղծվում է հետևանք արտահայտող որ, ուստի, ուստի և, այնպես որ և նման ստորադասական շաղկապների միջոցով։ Միայն այն դեպքում, երբ հետևանքն արտահայտվում է գլխավոր նախադասության միջոցով, կապակցությունն ստեղծվում է հետևանքի համար ոչ բնորոշ, ընդհանրական նշանակություն ունեցող որոշ հարաբերական բառերի ու ստորադասական շաղկապների միջոցով՝ երբ, որպես, որ, թե, եթե, որովհետև, որպեսզի, որքան որ և այլն։

Այս բոլորը թույլ են տալիս պնդելու, որ բաղդատությունը և հետևանքը ինչպես տրամաբանական, այնպես և շարահյուսական, քերականական կարգեր են։ Կազմավորելով բարդ դատողություններ՝ նրանք ստանում են լեզվական իրենց որոշակի, ինքնատիպ ձևավորումը։

Կա՞ն բարդ նախադասությունների համար բնորոշ շարահյուսական և այլ կարգեր։ Անշուշտ կան, և դրանց բացահայտումը լեզվաբանության կարևոր խնդիրներից մեկն է։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԻԱէ — Ա. Իսահակյան, Արձակ էջեր, Երևան, 1963։
ԲՍԱ — Բ. Սեյրանյան, Աղբյուրներ, Երևան, 1953։
ԳՍՀ — Գ. Սարյան, Հատընտիր, Երևան, 1945։
ԴԴՎ — Դ. Դեմիրճյան, Վարդանանք, Երևան, 1951։
ԵՉԵԺ — Ե. Չարենց, Երկերի ժողովածու, 6 հատորով, Երևան, 1962—1967։
ՀԹԵ — Հ. Թումանյան, Երկեր, 2 հատորով, Երևան, 1958։
ՀՄՆԱ — Հ. Մկրտչյան, Նովելներ և ակնարկներ, Երևան, 1947։
ՀՇՍԽ — Հ. Շիրազ, Սիամանթո և Խչեղարե, Երևան, 1958։
ՀՇՔՀ — Հ. Շիրազ, Քնար Հայաստանի, Երևան, 1958։
ՄԵԺ — Մուրացան, Երկերի ժողովածու, 7 հատորով, Երևան, 1956։
ՄՆԸԵ — Մ. Նալբանդյան, Ընտիր երկեր, Երևան, 1953։
ՆԴԵԺ — Նար-Դոս, Երկերի ժողովածու, 2 հատորով, Երևան, 1955։
ՊՍԱՋ — Պ. Սևակ, Անլռելի զանգակատուն, Երևան, 1966։
ՍՋԵԺ — Ս. Զորյան, Երկերի ժողովածու, 10 հատորով, Երևան, 1960-1963։
ՍՇԵ — Ս. Շահումյան, Երկեր, հ. 1, Երևան, 1957։
ՎԹԿՀՃ — Վ. Թոթովենց, Կյանքը հին հռոմեական ճանապարհի վրա, Երևան, 1966։

ՎԽԳԼ — Վ. Խեչումյան, Գիրք լինելության, վ. 1, Երևան, 1966։
ՎԽՄՄ — Վ. Խեչումյան, Մեզ մոտ հարավում, Երևան, 1955։
ՎՏԵԺ — Վ. Տերյան, Երկերի ժողովածու, 3 հատորով, Երևան, 1960—1963։
ՐԵԺ — Ռաֆֆի, Երկերի ժողովածու, 10 հատորով, Երևան, 1962—1964։
ՔԹՈՀ — Ք. Թավալցյան, Ոսկե հովիտ, Երևան, 1955։

СИНТАКСИЧЕСКИЕ КАТЕГОРИИ СРАВНЕНИЯ И СЛЕДСТВИЯ В СЛОЖНОПОДЧИНЕННЫХ ПРЕДЛОЖЕНИЯХ.

Б. А. ВЕРДЯН

Резюме

В армянском грамматиковедении сравнение и следствие были рассмотрены либо как формы выражения придаточных предложений образа действия и количества (М. Абегян), либо как самостоятельные придаточные предложения сравнения и следствия (В. Аракелян, Н. Парнасян).

В статье на многочисленных примерах показывается, что как сравнение, так и следствие выражаются во всех сложноподчиненных предложениях, где в какой то форме показывается качество предмета, действия или степень какого-либо качества.

Сравнение выражается в трех видах—сходства, различия и равенства. Все виды сравнения и следствия выражаются соответствующими относительными словами или союзами и потому они не могут считаться логическими формами. Как сравнение, так и следствие можно считать синтаксическими категориями в современном армянском языке.